



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«16» Տեպրի 2020թ.

№ 2/987-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 8-րդ մասով, «Մաքսային ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասով, մինչև 2020 թվականի փետրվարի 22-ը գործող «Մաքսային ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի թիվ 14/2020 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի 2-րդ բաժանմունքի գլխավոր մաքսային տեսուչ Արտաշես Յուրիի Կարապետյանի և մաքսային տեսուչ Հայկ Վարդգեսի Մարտիրոսյանի նկատմամբ կիրառել «դիտողություն» կարգապահական տույժը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կ.Գրիգորյանին՝ սույն հրամանն հրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՅԱՆ



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ